ՍԻՐԱՆՈՒՇ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆՈՐԱՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Այս սոցիոլոգիական ուսումնասիրության նպատակն է արտացոլել հայ աշակերտների վերաբերմունքը տեղեկատվական տեխնոլոգիաների ինտեգրմանը:

Ուսումնասիրությունը անցկացնելու համար մշակվել է հարցաթերթիկ եւ բաժանվել է Հայաստանի 11 մարզերում գործող դպրոցներում, մեկական յուրաքանչյուր մարզում: Դպրոցները ընտրվել էին ինտերնետ համակարգչային կենտրոնի առկայության հիման վրա, որոնք ստեղծվել են Հայաստանի դպրոցների փոխկապակցման ծրագրի շրջանակներում:

Հայաստանի դպրոցների փոխկապակցում ծրագիրը ԱՄՆ-ի Պետ-դեպարտամենտի Կրթական եւ մշակութային կապերի բյուրոյի ծրագիրն է, որը Ազատության աջակցության գործընթացի ֆինանսավորմամբ իրականացնում է Փրոջեքթ Հարմոնի կազմակերպության հայկական մասնաճյուղը, որը իրակա-նացնելով Հայաստանի դպրոցների փոխկապակցման ծրագիրը հզորացնում է տեղական ինտերնետային ցանցի հնարավորությունները՝ ապահովելով ծրագրի երկարաժամկետ պարտավորություններ: Ծրագիրը աշխատում է երեք ուղղությամբ՝ տեխնոլոգիաներ, կրթություն եւ համայնքներ:

Ծրագիրը Հայաստանի 11 մարզերից ընդգրկված 300-ից ավելի դպրոցներին ապահովում է ռեսուրսներով, ինտերնետ կապով եւ վերապատրաստմամբ: Ծրագիրը աշակերտներին, ուսուցիչներին եւ համայնքի անդամներին ապահովում է կապի, ինֆորմացիայի տարածման, օնլայն ծրագրերում ընդգրկվելու հնարավորությամբ ու զարգացնում է թվային աշխարհում գործելու հմտություններ: Ծրագիրը մեծացնում է դպրոց-համայնք փոխհարաբերությունը, ԱՄՆ-Հայաստան համագործակցությունը դպրոցի ու համայնքի մակարդակում եւ քաղաքացիական մասնակցությունը տեղական, ազգային եւ միջազգային մակարդակով: Հայաստանի դպրոցների փոխկապակցման ծրագիրը նպատակ ունի ինտեգրելու կրթական տեխնոլոգիաները ի նպաստ քաղաքացիական հասարակության կայացման ու միջմշակութային փոխըմբռնման:

Հետազոտության անց է կացվել 2004 թ. մայիս-հունիս ամիսներին, որի արդյունքում հարցվել է 485 մարդ, որից 257-ը 9-րդ դասարանցիներ եւ 228-ը 10-րդ դասարանցիներ են: Հարցումը անց է կացվել Հայաստանի բոլոր 11 մարզերում, բարձր դասարանի աշակերտների հետ, որոնց տարիքային խումբն

է 16-17 տարեկան: Հարցվածների 40.6 տոկոսը աղջիկներ են /197 մարդ/, իսկ 59.4 տոկոսը տղաներ /288 մարդ/:

Աղյուսակում նշված են այն դպրոցները եւ համապատասխանաբար յուրաքանչյուր դպրոցում հարցվածների քանակը, որտեղ անց է կացվել հարցումը՝

Աղյուսակ 1. Դպրոցների անվանումը եւ հարցվածների քանակը

Մարզը	Դպրոցի անունը/թիվը	հարցվածների քանակությունը	%
Արագածոտն	Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվ. դպրոց	41	8,5
Արարատ	Շահումյան գյուղի միջնակարգ դպրոց	42	8,7
Արմավիր	Արմավիրի թիվ 6 միջնակարգ դպրոց	50	10,3
Գեղարքունիք	Գավառի թիվ 9 միջնակարգ դպրոց	49	10,1
Երևան	Երևանի թիվ 7 Մայակովսկու անվ. միջնակարգ դպրոց	41	8,5
Լոռի	Ս.Հ.Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան Վանաձորի թիվ 1 միջնակարգ դպրոց	40	8,2
Կոտայք	Աբովյանի թիվ 10 միջնակարգ դպրոց	50	10,3
Շիրակ	Գյումրիի թիվ 15 Տերյանի անվ. միջնակարգ դպրոց	50	10,3
Սյունիք	Գորիսի թիվ 3 միջնակարգ դպրոց	32	6,6
Վայոց Ձոր	Ջերմուկի թիվ 2 միջնակարգ դպրոց	33	6,8
Տավուշ	Դիլիջանի թիվ 4 միջնակարգ դպրոց	50	10,3

Առաջին հերթին փորձել ենք պարզել աշակերտների իրազեկությունը ինտերնետ տեխնոլոգիաների վերաբերյալ: Հաշվի առնելով, որ հարցումը անց է կացվել Փրոջեքթ Հարմոնի կազմակերպության կողմից Հայաստանի դպրոցների փոխկապակցման ծրագրի շրջանակներում ստեղծված ինտերնետ համակարգչային կենտրոններ ունեցող դպրոցներում, ապա պատահական չէ, որ այն հարցին, թե ծանոթ եք, արդյոք ինտերնետին, հարցվածների 90.5 տոկոսը /439 մարդ/ պատասխանել են դրական: Հինգ տարի առաջ, բնականաբար, մենք այս պատկերը չէինք ունենա:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների վերաբերյալ իրազեկության նման բարձր տոկոսը նաեւ կապված է այն փաստի հետ, որ Հայաստանի Դպրոցների Փոխկապակցման ծրագրի ցանցում գործող դպրոցների կենտրոններում աշխատում են երկու աշխատակից, որոնք համակարգչային անվճար դասընթաց-

ներ են անցկացնում դպրոցի աշակերտության համար, եւ հարցվածների մեծ մասը դասերից հետո այցելում է կենտրոն դասընթացներին մասնակցելու համար:

"Արդյո՞ք ինտերնետ տեխնոլոգիաները անհրաժեշտ և օգտակար են դպրոցներին" հարցի շնորհիվ հնարավորություն դարձավ պարզել աշակերտների վերաբերմունքը ինտերնետ տեխնոլոգիաների անհրաժեշտության եւ օգտակարության վերաբերյալ: Եթե անգամ աշակերտների կողմից տեխնոլոգիաները չեն օգտագործվել, հարցվածների 94.7 տոկոսը /459 մարդ/ դրական են պատասխանել այս հարցին, այսինքն աշակերտների մեջ տեխնոլոգիաների ներդրումը կրթական համակարգ դրական վերաբերմունք է ձեւավորում:

Նախորդ հարցին դրական պատասխան տրվածների համար, առաջարկվում էր պատասխել հետևյալ հարցին. "Ձեր կարծիքով ինչու՞մն է ինտերնետի ներդրման անհրաժեշտությունը դպրոցներում /թվարկեք խնդրեմ մի քանիսը/", որով և փորձեցինք գնահատել աշակերտների հետաքրքրվածությունը այն հարցում, թե ինչո՞ւ է տեխնելոգիաների մուտքը դրական համարվում: Սա բաց հարց էր և աշակերտները իրենք էին պատասխանում, թե ի՞նչ կարեւորություն էին տալիս համակարգչային տեխնոլոգիաներին: Հարցին կարող էր տրվել մի քանի պատասխան.

Հարցվածների 44.7 տոկոսը /217 մարդ/ առաջնահերթ համարել են այն, որ ինտերնետը ինֆորմացիայի լայն աղբյուր է և համապատասխան նյութեր և տեղեկատվություն ստանալու հնարավորություն է ընձեռում: Սա առաջին հերթին խոսում է այն մասին, որ աշակերտները գտնվում են մեծ ինֆորմացիոն վակուումի մեջ, քանի որ դպրոցներում գործող գրադարաններում գրքերը չեն նորացվել տասնյակ տարիներ ի վեր, մինչդեռ ինտերնետը հնարավորություն է տալիս ավելի մեծ չափով բավարարելու աշակերտների կարիքները տեղեկատվություն բնագավառում: Պատահական չէր, որ հարցվածների նման մեծ տոկոս առաջին հերթին նշել էր ինտերնետը որպես ինֆորմացիայի աղբյուր: Հատկապես դրա սուր պակասություն է զգացվում գյուղական վայրերում, որտեղ մարդիկ թերթեր եւ ամսագրեր գրեթե չեն ստանում և փաստորեն ինտերնետը դառնում է ինֆորմացիայի միակ աղբյուրը:

Հարցվածների 26.2 տոկոսը /127 մարդ/ ինտերնետի ներդրման անհրաժեշտությունը տեսնում է ծանոթություններ հաստատելու եւ հաղորդակցվելու մեջ: Այդ տարիքի աշակերտները մեծ ծգտում ունեն շփվելու իրենց հասակակիցների հետ, բայց իրենց փոքր միջավայրում դա հնարավոր չի կամ էլ նման հնարավորությունները սահմանափակ են: Այդ իսկ պատճառով շփման կարիք ունեցող աշակերտները, վիրտուալ շփման միջոցով փորձում են լրացնել ինֆորմացիոն վակուումը: Երեխաները ինտերնետի միջոցով հնարավորություն ունեն զրուցելու եւ ծանոթանալու աշխարհի յուրաքանչյուր կետում գտնվող իրենց հասակակիցների հետ՝ սովորելով նաև այլ մշակույթներից:

Իհարկե, շատ լավ է, որ ներկայումս երեխաները կարողանում են շփվել միմյանց հետ, սակայն ստիպված անհրաժեշտ վիրտուալ շփումը չի կարող փոխարինել մարդկային շփմանը եւ մյուս կողմից սահմանափակում է միջմարդկային հարաբերությունները: Վիրտուալ շփումը հոգեբանորեն ոչ լիարժեք է դարձնում մարդկային շփումն ու հարաբերությունները:

Հետաքրքրական է այն փաստը, որ հարցվածները ինտերնետ տեխնոլոգիաների ներդրման հերթական կարևոր գործոն են համարել կրթության որակի բարձրացումը /13.8 տոկոս- 67 մարդ/ և համակարգչային, ինտերնետային գիտելիքների ձեռքբերումը /13.4 տոկոս – 65 մարդ/: Համարելով, որ համակարգչային գիտելիքների ձեռքբերումը նույնպես կրթության որակի բարձրացում է, կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ աշակերտների 27.2 տոկոսը կարևորություն է տվել կրթության որակի բարձրացմանը: Անհրաժեշտ է նշել, որ ներկայիս դպրոցական կրթությունը դեռևս շատ հարցերում ետ է մնում համաշխարհային զարգացման արդի պահանջներից, մինչդեռ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը տալիս է այդ զարգացման հնարավորությունը: Ուստի ամենևին պատահական չէր հարցման պատասխանների մեջ կրթության որակի բարձրացմանը կողմ նշվածների նման բարձր տոկոսը:

Այստեղ պետք է հաշվի առնենք այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին է <u>ինքնուսուցումը</u>: Մի բան է, որ դպրոցը իր կրթական համակարգով կրթում է սերունդ, իսկ այլ հարց է երբ մարդիկ ինքնուրույն զբաղվում են իրենց կրթության զարգացմամբ: ՏՀՏ-երը /տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները/ մի կողմից բարձրացնում են անձնական հնարավորությունները ընդհանուր կրթական իմաստով, բայց մյուս կողմից մենք պետք է քաջ գիտակցենք, որ դա ոչ թե համընդհանուր կրթական համակարգ է, այլ ինքնակրթության ձև:

Ինչպիս՞ի կրթական ինտերնետային էջեր եք Դուք օգտագործում /թվարկեք մի քանիսը/: Այս հարցին աշակերտները պատասխանել են հետևյալ կերպ:

- ինֆորմացիոն/տեղեկատվական - ընդհանուր տոկոսը 27.3 տոկոս
- հաղորդակցման հնարավորություններ/չաթ – 23.8 տոկոս
- կրթական – 37.6 տոկոս:

Հարցվածների 17.8 տոկոսը հարցին պատասխան չեն տվել, իսկ 26.7 տոկոսը պատասխանել են, որ չեն օգտվում որեւէ կրթական էջերից:

Ինտերնետային համակարգը դպրոցներում արդյունավետ օգտագործման համար անչափ կարևոր էր իմանալ հենց իրենց՝ աշակերտների կարծիքը, թե որքանո՞վ ինտերնետ տեխնոլոգիաների օգտագործումը նպաստել նրանց գիտելիքների զարգացմանը և հարստացմանը: Հարցման մասնակից 485 աշակերտներից 221-ը 45.6% պատասխանել է, որ շատ է նպաստել, իսկ 233-ը՝ 48.0 % նշել էին, որ մասամբ է նպաստել, միայն աշակերտներից 29-ը - 6%--ը,

որոնք մեծամասնությամբ եղել էին նրանք, ովքեր ինտերնետից բոլորվին չէին օգվել նշել էին, որ այն բոլորովին չի նպաստել իրենց ուսուցման գործին : Տես՝ ստորև բերված գրաֆիկը:

Գրաֆիկ 1. Որքանո՞վ է ինտերնետ տեխնոլոգիաների օգտագործումը նպաստել աշակերտների գիտելիքների զարգացմանը և հարստացմանը

Գրաֆիկ N1



Ինչպես ակնառու ցուց է տալիս գրաֆիկը, հարցման մասնակից աշակերտների ճնշող մեծամասնությունը 93,6% հասկանում և զգում է Ինտերնետային համակարգի օգտագործման կարևորությունը կրթության հետագա զարգացման տեսակետից:

Հաջորդ հարցը «Եթե օգտագործել եք ինտերնետը, խնդրում ենք ընդգծել թե ի՞նչ նպատակով եք օգտագործել այն դպրոցի ԻՀ կենտրոնում», նպատակ ուներ ճշտել աշակերտների հետաքրքրությունների շրջանակը, որը հնարավորություն կտա առավել ճշգրիտ կերպով կառուցել ռազմավարությունը համակարգչային տեխնոլոգիաները և ինտերնետը օգտագործելու բնագավառում: Սոցիոլոգիական հարցման արդյունքները այս հարցում պարզորոշ վկայում են, որ ինտերնետային համակարգը աշակերտների համար հիմնականում ծառայել է որպես ինֆորմացիայի աղբյուր/ 71,3%/: Աշակերտների 50 %-ը այն օգտագործել է նամակագրության համար, 45,2 %՝ ծանոթությունների համար, 24,7 %-ը՝ զվարճալի խաղերի համար, 4,5 %-ը՝ չաթի համար: Ցավոք, դեռևս շատ ցածր տոկոս է կազմում աշակերտների կողմից օնլայն ծրագրերին մասնակցությունն՝ ընդամենը 22 մարդ կամ 4,5% և օնլայն առարկայական տեստերին մասնակցությունը 0,2 %: Սա վկայում է, որ ապագայում հանրակրթական դպրոցները ինտերնետի արդյունավետ օգտագործման հարցում պետք է ռազմավարությունը կառուցեն այնպես, որպեսզի

/

առանձնահատուկ ուշադրություն դարձվի ուսումնական նպատակներով աշակերտներին ինտերնետ համակարգը ծառայեցնելը: Այստեղ առանձնակի տեղ պետք է տրվի կրթական կայքերի/սայթերի/ ուսումնասիրմանը, օնլայն կրթական ծրագրերի մասնակցությանը, ինչպես նաև հեռահար կրթության կայքերի մասին սպառիչ ինֆորմացիայի տրամադրմանը աշակերտներին: Ուշադրություն պետք է հատկացնել նաև աշակերտների այն հատվածին, որոնք բոլորովին չեն օգտվել ինտերնետային համակարգից: Այդպիսիները հարցման մասնակիցների մեջ կազմել են 5,6%:

Մեր հետազոտության համար կարևոր նշանակություն ուներ նաև այն, թե ինչպիս՞ի հաճախականությամբ էին օգտվել աշակերտները ինտերնետից իրենց դպրոցներում: Հարցման արդյունքներից պարզվեց, որ աշակերտների գերակշռող մասը՝ 46,5%-ը համակարգիչներից օգտվել է շաբաթը մի քանի անգամ: Աշակերտների 23,9 %-ը ինտերնետից օգտվել էր շաբաթը մեկ անգամ, 10,5 %-ը ամիսը մեկ և միայն 10,1%-էր օգտվել ամեն օր: Տես՝ գրաֆիկ # 2:

Գրաֆիկ 2. Ինտերնետից օգտվելու հաճախականություն



Մեր համար կարևոր է նաև ճշտել, թե ի՞նչ արդյունավետությամբ են օգտագործվում ինտերնետ համակարգչային կենտրոնների հնարավորությունները դպրոցական այլ առարկաները ուսուցանելու նպատակով: Այն պարզելու համար աշակերտներին տրվել էր հարց «Բացի համակարգչային դասընթացներից արդյո՞ք մասնակցել եք դասերի այլ առարկաների գծով համակարգչային կենտրոնում»: Հարցման մասնակից 485 աշակերտների 319-ը /65.8% / պատասխանել էր այո այս հարցին, իսկ 166-ը՝/34,2%/ ոչ:

Մեզ համար հատկապես հետաքրքրական էր նաև այն, թե ո՞ր առարկաներից և ի՞նչ հաճախականությամբ էին աշակերտները մասնակցել առարկայական դասընթացների համակարգչային կենտրոններում: Բնականա-

բար այս հարցում առաջնությունը պատկանում էր Ինֆորմատիկա առարկային, որից ԻՀԿ–ում շաբաթը մեկ դասընթացների մասնակցել էին 90 աշակերտներ կամ հարցման մասնակիցների 18,6%-ը: Ինչպես ցույց տվեցին հարցման մյուս տվյալները ԻՀԿ–ներում հատկապես ակտիվ աշխատել են անգլերենի, պատմության, հայ գրականության, աշխարհագրության և ֆիզիկայի ուսուցիչները, որոնք առավել մեծ հաճախականությամբ են համակարգչային կենտրոնները օգտագործել դասապրոցեսի կազմակերպման /դասի հաղորդում, թեմայի ամփոփում, նոր նյութի հաղորդում/ նպատակներով:

Հատկաշանական է, որ վերջին 3 առարկաներից դպրոցներում առկա են նաև լազերային սկավառակներ, որոնք անշուշտ նպաստել են տվյալ առարկաների գծով դասերի անցկացմանը: Նույնը չի կարելի է ասել կենսաբանություն և քիմիա առարկաների դասավանդման մասին, որոնցից թեև կան լազերային սկավառակներ, սակայն տվյալ առարկաները ավելի սակավ են դասավանդվել համակարգչային կենտրոններում և համապատասխանաբար շատ քիչ թվով աշակերտներ են հաճախել այնտեղ:

Հետազոտությունը ցույց տվեց, որ ինտրենետ համակարգչային համակարգի հետագա նպատակային և արդյունավետ օգտագործման համար հարցման մասնակից աշակերտներն առաջարկել են հետևյալը. 151 աշակերտներ կամ հարցման մասնակիցների 31,1%-ը առաջարկել է ավելացնել իրենց դպրոցների ԻՀԿ-ների համակարգիչների թիվը կամ հզորացնել դրանք:

Հարցման մասնակից 93 աշակերտների կամ 19,2%-ը, կարծում է, որ ԻՀ կենտրոնի արդյունավետությունը կարելի է բարձրացնել՝ ավելացնելով այնտեղ անցկացվող համակարգչային դասընթացները կամ դրանց հատկացրած դասաժամերի քանակը: Հարցման մասնակիցների 45-ը՝ կամ 9,3%-ը ԻՀԿ-ների արդյունավետ աշխատանքը կապում է Ինտերնետ կապի որակի բարելավման հետ, իսկ 36-ը՝կամ 7,4%-ը գտնում է, որ ինտերնետ համակարգչային կենտրոնները ավելի օգտակար կգործեն, եթե ավելի շատ դասընթացներ կազմակերպեն տարբեր առարկաների գծով: Նրանցից 24-ը՝ կամ 4,9%-ը օգտակար է համարում ավելի շատ իրականացրել օնլայն ծրագրեր, 8-ը՝ կամ1,6%-ը՝ ավելացնել բարձրորակ մասնագետների թիվը,7-ը՝ կամ 1,4%-ը ավելի հաճախակի միջոցառումներ կազմակերպել, 5-ը՝ կամ 1%-ը ավելացնել կրթական ռեսուրսները և այլն: Հատկանշանական է, որ աշակերտների կողմից առաջարկություններ են եղել ավելացնել հայալեզու համակարգչային ծրագրերը, հաճախակի կազմակերպել տարատեսակ օնլայն մրցույթներ և այլ կարգի միջոցառումներ, որոնք մեր կարծիքով տեղին կլինի հաշվի առնել ԻՀԿ-ների հետ տարվող հետագա աշխատանքներում: